

Ս. Դ. Սյրանսյան

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Փոխանունությունը (լատինացի) տերմինը նախապես եղել է ոչ քերականական տերմին: Այն գործածվել է և այժմ էլ հաճախ գործածվում է ոճարանական իմաստով: Փոխանունությունը հայտնի է իրրև ճարտասանական ձև, ոճական միջոց, երբ մի բառի փոխարեն գործածվում է ուրիշը՝ նրանց միջև եղած նմանության կամ հարաբերության հիման վրա: Այդ հարաբերությունները տարրեր ընդլայնվում են, և ըստ այնմ ոճարանական փոխանունությունները ծագում են սարբեր հիմքի վրա, գործածվում են տարբեր նպատակներով: Այսպես՝ փոխանունության մեջ կարող է գործածվել պատճառը հետևանքի փոխարեն, հետևանքը պատճառի փոխարեն, պարունակողը պարունակյալի, վերացականը՝ թանձրացականի, մասը ամբողջի փոխարեն և այլն: Փոխանունությունն իր այս և այլ գրեթե անհատական լայն գործածություն ունի հատկապես զեղարվեստական խոսքի մեջ, հանդիսանում է նրա ոճավորման, խոսքը ավելի արտահայտիչ, դիպուկ դարձնելու կարևոր միջոց:

Ոճարանական փոխանունությունից բացի, կա նաև քերականական փոխանունություն, որն ունի թե՛ որոշակի շփման եզրեր ոճարանական փոխանունության հետ և թե՛ մեծ տարբերություններ նրանից:

Քերականական փոխանունությունը ամենից առաջ վերաբերում է ոչ գոյականների գոյականարար գործածությանը: Փոխանունությունն այս դեպքում ունի ոչ այնքան ոճական, որքան քերականական նշանակություն, թեև ոճական դեր էս կատարում է: Ոճարանական փոխանունության դեպքում բառը սովորաբար չի փոխում իր խոսքի մասային պատկանելությունը, և եթե առանձին դեպքերում փոխում էլ է, ապա դա բնավ կարևոր չէ այդ փոխանունության համար: Քերականական փոխանունության մեծ մասի համար բնորոշը և հատկանշականը մեկ խոսքի մասը մի այլ խոսքի մասի դերով, ավելի ճիշտ ոչ գոյականը գոյականի դերով գործածվելն է: Այսպես՝ կավր հաճելի է բոլորի համար: Չուսը երկուսի կրկնապատկին է: Նա կազմադր լավ ըմբռնեց:

Ինչպես տեսնում ենք, ընդգծված բառերից մեկը ածական է, մյուսը՝ թվական, երրորդը՝ բայ, բայց բոլորն էլ գործածված են գոյականարար գոյականի դերով ու փոխանուններ են: Նշենք, որ ինչպես այս օրինակներում, այնպես էլ ընդհանրապես բառերը փոխանունարար գործածվելիս չեն փոխում իրենց խոսքի մասային պատկանելությունը: Հիշյալ օրինակներում ածականը, թվականը, բայը մնում են որպես այդպիսիք և միայն ստանձնում են գոյականի դեր, նախադասության մեջ կատարում են գոյականին հատուկ պաշտոն:

Քերականական փոխանունությունն ունի տարրեր յուրահատկություններ ու գրեթե անհատական փոխանունների միջև տարբերությունները երբեմն շատ զգալի են, և դա հիմնականում պայմանավորված է որպես փոխանուն գործածվող խոսքի մասի, բառերի ընդհանուր իմաստային հատկանիշով: Հենց այդ նկատի ունենալով, փոխանունները ավելի մանրամասն ուսումնասիրելու և նրանց

հատկանիշները բացահայտելու համար, մենք փոխանուններն ուսումնասիրում ենք ելնելով իբրև փոխանուն գործածվող բառերի իմաստային հատկանիշից, խոսքի մասային ընդհանուր իմաստից:

Շատ տարածված են ու սովորական առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի փոխանունները: Այդ բառերն են՝ ածականներ, բնականներ, դերանուններ մի մասը (որոնք ցույց են տալիս առարկայի հատկանիշ), դերբայների մի մասը (հարակատար, ենթակայական դերբայները, որոնք առարկայի հատկանիշ կարող են ցույց տալ, այլև անորոշ դերբայը):

Այս բոլոր բառերի գոյականաբար կամ փոխանունաբար դործածությունը դրսևորվում է հետևյալ կերպ. այդ բառերի համար բնորոշ է առարկայի անվան վրա գրվելը և դրանով իսկ որոշիչի դեր կատարելը. սակայն դրանք կարող են իրենց մեջ ներառնել գոյական որոշյալի ընդհանուր առարկայական իմաստը, դրանով իսկ իրենց արտահայտած հատկանիշի իմաստին ավելացնել գոյականական տարր, հանձին առարկայի իմաստի. իսկ որովհետև առարկայի իմաստը ամենաընդհանուր ձևով է մտնում հատկանիշի իմաստ ունեցող այդ բառերի մեջ, այդ պատճառով էլ փոխանունը, որպես բառ, չի փոխում իր խոսքի մասային պատկանելությունը, չի դառնում գոյական, այլ նախադասության մեջ միայն կատարում է գոյականի դեր: Այսպիսի փոխանունների մեջ նշած առարկայական կոնկրետ իմաստը կարելի է որոշել խոսքի մեջ, կոնտեքստում, խոսելու կոնկրետ պայմանները հաշվի առնելով: Նկատի ունենալով, որ այդ փոխանունների համար հատկանշական են թե՛ առարկայական սրոշ իմաստի առկայությունը հատկանիշի իմաստ ունեցող բառի մեջ և թե՛ բառի ֆունկցիոնալ փոփոխությունը, դրանք կարելի է կոչել իմաստային-ֆունկցիոնալ փոխանունություն:

Քերականական փոխանունության մյուս տեսակը կարելի է կոչել անվանողական-ֆունկցիոնալ փոխանունություն: Սա այն փոխանունությունն է, որի դեպքում մենք նկատի չունենք բառի իմաստը, իմաստային հատկանիշները. տվյալ դեպքում բառը մենք նկատի ունենք իբրև պարզապես լեզվական միավոր, լեզվական արտահայտություն: Երբ ասում ենք «սակայն»-ը շաղկապ է. մենք նկատի չենք առնում սակայն բառի արտահայտած հարաբերությունը. այդ բառը այս գործածության մեջ չի դրսևորում իր շաղկապական իմաստն ու դերը: Մենք սակայն-ը նկատի ունենք իբրև լեզվական միավոր, և այդ բառը հիշյալ նախադասության մեջ սոսկ անվանողական, ավելի ճիշտ կլիներ ասել, ինքնանվանողական ֆունկցիա է կատարում:

Խոսելով չթերվող խոսքի մասերի փոխանունության մասին՝ պրոֆ. Գ. Սևակը իրավացիորեն գրում է. «Պետք է նկատել, որ չթերվող խոսքի մասերի փոխանունությունը պարզի կերպով տարբերվում է փոխանունության մյուս հրևոյթներից, մանավանդ այդ նկատվում է շաղկապի և կապի փոխանունության դեպքում: Նման դեպքերում շաղկապը և կապը հանդես են գալիս իբրև իրենց անուն»:

Անվանողական-ֆունկցիոնալ փոխանունությամբ կարող են դործածվել ոչ միայն չթերվող, այլև բոլոր խոսքի մասերը, այդ թվում նաև գոյականը: Դրանց անվանողական կամ ինքնանվանողական դերը շատ որոշակիորեն է երևում հենց պոյականի մեջ, Այսպես՝ «Դարուն-ը երկվանկ բառ է» նախադաս-

սուբյան մեջ պարուն-ը փոխանուն է, որ մենք վերցնում ենք սոսկ իբրև անուն, իբրև լեզվական միավոր՝ արտահայտված գ-ա-ր-ու-ն հնչյունակապակցությամբ, և անտեսում ենք նրա իմաստը: Դա առավել ևս որոշակի է երևում, երբ մենք վերևի օրինակը համեմատում ենք նույն բառի բուն իմաստային հիմքի վրա ունեցած որևէ կիրառության հետ: Ասենք, «Կարունո տարվա երկրորդ եղանակն է»՝ Այստեղ մեզ հետաքրքրող բառը հանդես է գալիս տարվա եղանակի իր որոշակի իմաստով, այն եղանակի, որ անմիջապես հաջորդում է ձմռանը, նախորդում՝ ամռանը: Այսպիսով, այս խմբի մեջ մտնող փոխանունները բնորոշվում են իրենց սոսկ անվանողական դերով ու ֆունկցիոնալ յուրահատկությամբ: Այդ պատճառով էլ մենք դրանք անվանում ենք անվանողական-ֆունկցիոնալ փոխանուններ:

Որպես այսպիսի փոխանուն կարող են դործածվել լեզվի բոլոր բառերը, այլև լեզվական ամեն մի միավոր, ամեն մի արտահայտություն:

Իմաստային-ֆունկցիոնալ և անվանողական-ֆունկցիոնալ փոխանունների միջև կա մի էական տարբերություն ևս: Քանի որ իմաստային-ֆունկցիոնալ փոխանունների մեջ, ինչպես ասվեց, և՛ նկատի է առնվում բառի բառական իմաստը, և՛ նրան ավելանում է նոր, առարկայական իմաստ, ապա այս երկուսը միասին հիմք տալիս են այդպիսի փոխանունների բառական իմաստի փոփոխությանը, խոսքի մասային պատկանելության փոփոխման, այսինքն՝ խոսքի մասային փոխանցման: Եա հատկապես վերաբերում է ածականներին ու որոշ դերայինների, որոնցից առաջանում են գոյականներ, ինչպես՝ զինվոր, բանվոր, գրող, ծնող և այլն: Այսպես ուրեմն, շատ ածականների ու որոշ դերայինների՝ գոյականի վերածվելու հիմքը հատկանիշ ցույց տվող այդ բառերի ածականի գոյականաբար գործածությունն է և բաց թողնվող գոյականի հասկանալի լինելը:

Անվանողական-ֆունկցիոնալ դերանուններին հատուկ չէ այդպիսի փոփոխությունը, խոսքի մասային փոխանցումը, քանի որ նրանցում բառիմաստը դեր չի կատարում: Այսպիսով, փոխանունների այդ երկու տեսակները միմյանցից տարբերվում են նաև բառիմաստի փոփոխության, բառապաշարի պարզացման խնդրում ունեցած դերի տեսակնտից:

Իմաստային-ֆունկցիոնալ և անվանողական-ֆունկցիոնալ փոխանունությունների միջև, ինչպես տեսանք, կա զգալի տարբերություն: Այժմ տեսենք, թե ի՞նչ ընդհանրություն կա դրանց միջև, որն է փոխանունության այդ երկու տեսակների ընդհանուր հատկանիշը, հետևաբար և ինչով է բնորոշվում քերականական փոխանունությունը:

Դրանց միջև կա այն ընդհանուրը, որ երկու դեպքում էլ այդ բառերը իրենց բուն կիրառությամբ չեն հանդես գալիս: Իրանք գործածվում են այլ ձևով՝ ոչ գոյականները գոյականաբար, գոյականները՝ սոսկ երկրորդական անվանողական դերով: Այս վերջին դեպքում բառերի գործածությունը բառիս նեղ իմաստով փոխանունություն կոչվել չի կարող, քանի որ թե՛ գործածվող բառն է գոյական և թե՛ բառի տվյալ երկրորդական կիրառության մեջ է նա գոյականի դեր կատարում: Այսինքն՝ ոչ գոյականը չէ, որ գոյականի դեր է կատարում, այլ գոյականը (բայց երկրորդական կիրառությամբ): Երբ քանի որ գոյականների այդպիսի անվանողական-ֆունկցիոնալ փոխանունությունը ըստ էության կազմվում է մյուս բոլոր անվանողական-ֆունկցիոնալ փոխանունների սկզբունքով (տարբերությունը միայն այն է, որ տվյալ դեպքում գոյականն է գոր-

ծածվում), ուստի դրանք ևս պետք է համարել փոխանուններ և նկատի ունենալ այդ տերմինի իմաստի որոշ պայմանականությունը տվյալ դեպքում:

Այժմ անցնենք փոխանունության այդ երկու տեսակների քննությանն առանձին-առանձին:

Փոխանունությունը ըստ էության բնեկու համար պետք է նկատի ունենալ նրա իմաստը, դերը և ձևը: Իմաստային-ֆունկցիոնալ փոխանվան իմաստը երկու կողմ ունի. տվյալ բառի բուն բառական (այսպես ասած բառարմատի) իմաստը և այն առարկայական որոշ ընդհանուր իմաստը, որ տվյալ բառին ընդհանրապես հատուկ չէ, և որ այն ստանում է միայն փոխանունարար գործածվելիս: Փոխանունների իմաստային հատկանիշը քննելիս հատկապես պետք է ուշադրություն դարձնել այս վերջին կողմի վրա, քանի որ դա է նրա մեջ փոխանվանականը, թեև, ինչպես կոտեսենք ստորև, փոխանվանական այս իմաստի բնույթը, յուրահատկությունը սերտորեն կապված են նրա բառական իմաստի հետ և պայմանավորված լին նրանով:

Իմաստային-ֆունկցիոնալ փոխանվան առարկայական իմաստը երկու կարգի դրսևորում կարող է ունենալ: Նախ, տվյալ փոխանվան մեջ ներառնված առարկայական իմաստը կարող է լինել որևէ առարկայի իմաստ, թեև վերջինս որոշակիորեն չի կարող հասկացվել տվյալ բառից առանձին վերցրած:

Օրինակ՝ «Քաղաքի գործարաններից հինգը արդեն կառարել են իրենց տարեկան արտադրական պլանները»: Այս նախադասությունից իսկ հասկանալի է դառնում, թե հինգը փոխանունը ինչ է նշանակում, հինգ ինչ առարկաների մասին է խոսքը:

Սակայն հաճախ տվյալ փոխանվան առարկայական վերաբերությունը կարող է պարզվել այլ, հատկապես կից նախադասությունները հաշվի առնելու դեպքում: Օրինակ՝ «Սիրում էր նա ելլորն, ինչպես քույրը կարող էր սիրել, մանավանդ տեսնելով Կոլյայի ուշադրությունը, հիացմունքն ու հպարտությունն իր ամեն մի հաջողության համար: Երկուսով միասին նրանք չէին կարող քաղաքում սովորել, ընտանիքից հեռանալ» (ՀՔ, ՄՏԶ, էջ 325): Երկուսով այստեղ նշանակում է «երկու եղբայրներով»: Իհարկե, առանց նախորդ նախադասությունը նկատի ունենալու հասկանալի է, որ խոսքը վերաբերում է անձանց, բայց թե ի՞նչ անձանց, դա պարզվում է միայն նախորդ նախադասությունից: Վերցնենք մեկ ուրիշ օրինակ. «Շուրան այն ժամանակ հասկացավ, որ այդ խոսքերն իրեն էին վերաբերում, երբ ձայն ավոզն ու մյուսները արդեն հեռացել էին բակից, իսկ աստիճաններից ներքև՝ բակում պառկած էին մնացել կանաչ շինելավորները, մեկը ձգված մեջքի վրա, երկուսը՝ դեմքերը ձներին հպած: Մեջքի վրա րնկածը բերանը դանդաղ բաց ու խուփ էր անում» (ՀՔ, ՄՏԶ, էջ 328): Այս նախադասությունից հասկանալի է, որ ընդգծված փոխանուններով ցույց տրվողները անձինք են: Բայց դա քիչ է խոսքի կամ տվյալ հատվածի բովանդակությունն իմանալու համար: Այդ անհասկանալին ավելի որոշակիորեն պարզվում է նախորդ նախադասություններից, որտեղից մենք իմանում ենք, որ ձայն տվողն ու մյուսները սովետական զինվորներ են, իսկ շինելավորները՝ «շինելավոր ֆաշիստ զինվորներ» (էջ 328):

Այսպիսով, իմաստային-անվանողական փոխանունության մեջ եղած առարկայական իմաստը որոշակիորեն պարզելու համար հաճախ անհրաժեշտ է լինում նկատի ունենալ կից նախադասությունը կամ նախադասությունները մի խոսքով՝ կոնտեքստը:

Փոխանվան մեջ ներառնված առարկայական իմաստը, սակայն կարող է չլինել այս կամ այն առարկայի իմաստ։ Օրինակ՝ Չորսը Երկուսի կրկնապատիկն է։ Չորսը, Երկուսը այստեղ իրենց իմաստի (թվի) մեջ չեն ներառնում նաև որևէ առարկայի իմաստ, այլ նրանք ցույց են տալիս այդ թվերը իրեն առարկայացված վերացություններ։

Իմաստային-ֆունկցիոնալ փոխանությունների էության քննության համար կարևոր է, թե որ փոխանունը ինչպիսի առարկայական իմաստ է ներառնում իր մեջ։ Այս տեսակետից տարբեր բառեր տարբեր յուրահատկություններ ու հնարավորություններ ունեն։ Այս հարցում կարևոր նշանակություն ունի բառի բառային իմաստը։ Ավելի ընդհանուր իմաստ ունեցող բառերն իրենց մեջ կարող են ներառնել ավելի շատ առարկայական իմաստներ և, ընդհակառակը, պակաս ընդհանուր իմաստ ունեցող բառերը՝ ավելի քիչ։

• Այս տեսակետից ամենից առաջ թվականներն են, որ իրենց իմաստային վերացականության պատճառով կարող են ներառնել ամենաբազմազան և ըստ էության բոլոր տեսակի առարկայական իմաստներ, այն ամենի, ինչ որ կարող է հաշվվել։

Օրինակ՝ Երեք կարող է նշանակել «երեք մարդ, դրիչ, քար, շենք, քաղաք, երկիր, երեսա, արբանյակ, թերթ, միտք, բառ, լեռ, ծաղիկ, տառ» և այլն, և այլն։

Թվականներին այս տեսակետից մոտ են մի շարք դերանուններ. նույն, մյուս, բոլոր, յուրաքանչյուր, ամեն մի, և այլն, որոնք նույնպես կարող են վերաբերել ամեն մի առարկայի, երևույթի, հետևապես և կարող են իրենց մեջ ներառնել դրանց ընդհանուր իմաստները։

Այս տեսակետից այլ յուրահատկություն ունեն ածականները։ Սրանք առարկայական վերաբերության տեսակետից միօրինակ չեն, հետևապես միօրինակ չեն առարկայական իմաստ ներառնելու չափի ու հնարավորության տեսակետից։ Այս տեսակետից կարևոր է ածականների իմաստային ծավալը։ Համեմատենք գեղեցիկ և խոհուն ածականները։ Գեղեցիկ հատկանիշը կարող է վերաբերել ամեն տեսակի առարկայի՝ շնչավոր թև անշունչ, անձ թև կենդանի, իր թև երևույթ (ծառ, երեսա, լիճ, եղնիկ, շենք, ձևափայտ, միտք, դադափար, համեմատություն և այլն, և այլն)։

Օրինակ՝

«Մի գեղեցիկ տղա խաղում էր եղջերվի ձագի հետ» (Բ, 7, էջ 41)։

«Նրա գեղեցիկ զեմքը հարյուր անգամ փոխեց յուր դույնը» (Բ, 7, էջ 279)։

«Այդ գեղեցիկ արկղիկը սարսափեցրեց նրան» (Բ, 7, էջ 137)։

«Դեռ վաղեմի դիցանվեր անտառները հովանավորում էին այդ լեռան գեղեցիկ բարձրավանդակները» (Բ, 7, էջ 72)։ «Նա աչք ածեց դեպի յուր գեղեցիկ, դարդարուն շրջապատը» (Բ, 7, էջ 135)։ «Գեղեցիկ գրչագրով նույն պարոն Արշակը գրել էր» (Բակ., էջ 354)։

Մինչդեռ խոհուն ածականը կարող է վերաբերել միայն մտավոր կարողություն ունեցողներին՝ մարդկանց։

Օրինակ՝

«Միջամտեց մի խոհուն շինական» (Դ. Դեմիրճյան, Վարդանանք, 1954, էջ 334)։

Խոհուն ածականը կարող է երբևիցե դորժածվել աշխ, զեմք, հայացք բառերի հետ, բայց վերջիններին միջոցով դարձյալ բնորոշվում է մարդը։ «— Կա

արդարություն, պիտի գա, — ասաց մի շինական խոհուն աչքերը կրակին» (ԴԴ, 4, էջ 239)։ «— Երկարառակել, — ասաց մի ուր խոհուն հայացքը մի կեռի հառած Միհրենըսեհը իր մտերիմ պալատականին» (ԴԴ, 3, էջ 297)։

Ստացվում է, որ հատկանիշ ցույց տվող բառերի՝ առարկայական իմաստ ներառնելու հնարավորությունը ուղիղ համեմատական է նրանց առարկայական վերաբերության, այսինքն՝ փաստորեն նրանց իմաստային ծավալին²։

Փոխանվանական իմաստի տեսակետից ուշադրավ յուրահատկություններն ունեն նաև դերբայները։ Դերբայներից փոխանվանաբար գործածվում են, ինչպես տեսանք, ենթակայականը, հարակալաւարը և անորոշը։

Ուշադրության արժանի յուրահատկություններ կան թե՛ տարրեր բայերի միևնույն դերբայական ձևի փոխանվան մեջ և թե՛ միևնույն բայի տարբեր դերբայական ձևերից կազմված փոխանունների մեջ։

Նախ՝ առաջին հարցի մասին։

Քանի որ տարրեր առարկաներ կարող են կատարել տարրեր գործողություններ, հետևապես և տարրեր բայեր կարող են վերաբերել տարրեր գոյականների, այդ պատճառով էլ առաջանում են միևնույն դերբայական ձևին պատկանող տարրեր բայերի փոխանունների մեջ առարկայական իմաստի համապատասխան յուրահատկություններ։

Վերցնենք մի քանի դերբայներ. երևացող, նայող, զնահաւորող։ Երևացող դերբայից կազմված փոխանունը կարող է իր մեջ ներառնել ամեն մի նյութական իմաստ, քանի որ այն, ինչ որ նյութական է, առարկայական է, կարող է երևալ և լինել երևացող (մարդ, կենդանի, ծով, տերև, լույս, ամպ, աստղ և այլն)։ Նայող դերբայից կազմված փոխանունը կարող է իր մեջ ներառնել միայն այնպիսի առարկաների իմաստներ, որոնք օժտված են տեսնելու, նայելու կարողությամբ (մարդիկ և կենդանիներ)³։ Դնահաւորողը փոխանունը ավելի նեղ իմաստ ունի, քանի որ այդ գործողությունը կարող են կատարել միայն մտավոր կարողություն ունեցող էակները՝ մարդիկ, ուստի և այդ թայածակ մեջ կարող է ներառնվել «մարդ» իմաստը (իր տարրեր արտահայտություններով (ուսուցիչ, դասախոս, ինժեներ և այլն)։

Ավելին. միևնույն բայը իր տարրեր իմաստների դրսևորման ղեկավար կարող է տարրեր տեսակի առարկայական իմաստ ներառնել իր մեջ։ Վերևի բայերից նայող բայը կրկնասեռ բայ է, կարող է գործածվել և՛ շեղոք սեռով՝ «հայացք գցելու» իմաստով, և՛ ներգործական սեռով՝ «քննելու, զննելու, ուսումնասիրելու» իմաստով։

Առաջին ղեկավար այդ բայն ունի իր՝ վերևում նշված փոխանվանական իմաստը։ Իսկ այդ բայի ներգործական կիրառությունները կարող են վերաբերել միայն մարդուն՝ քննողին, զննողին։ Այսինքն՝ այս վերջին ղեկավարում բայի իմաստն ավելի նեղ է, հետևապես և ենթակայական դերբայի մեջ առարկայական իմաստ ներառնելու հնարավորությունն ավելի սահմանափակ է։

Իսկ եթե վերցնելու լինենք ենթակայական դերբայի կրավորականի փո-

² Բառերի փոխանունության առիթով քննարկվող այս երևույթը բոլոր էությունների վերաբերում է նաև բառակապակցություններին և կարող է օգտակար լինել նրանց ուսումնասիրման դրժում՝ այս կամ այն բառի՝ այլ բառերի հետ կապակցվելու, կապակցություն կազմելու հարցը որոշելիս։

³ Մասնավոր երևույթ է այս բառի փոխարկական գործածությունները, որ դարձյալ բուն կիրառության նմանությամբ են ասվում։

խանունը, կաեսնենք, որ այստեղ էլ փոխանվան մեջ ներառնվող առարկայական իմաստը վերաբերում է ոչ թե գործողություն կատարողին, այլ գործողության օբյեկտին: Վերցնենք հիշյալ ներգործական բայերի կրավորականը. նայվող և զննաստվող: Ընդհանրապես, կրավորական ձևերի իմաստն ավելի լայն է, քան թե համապատասխան բայերի ներգործականի իմաստը: Հետևապես և կրավորականներից կազմված փոխանվան առարկայական իմաստը ավելի լայն է, քան դրանց ներգործական փոխանուններինը: Դրա պատճառն այն է, որ տվյալ գործողությունը կարող են կատարել սահմանափակ թվով՝ էակներ, առարկաներ, իսկ այդպիսի գործողության օբյեկտ կարող է լինել ամեն մի առարկա, անձ, երևույթ:

Ինչպես երևում է բերված փաստերից, միևնույն ղերբայական ձևի տարբեր բայերի փոխանուններն ունեն տարբեր առարկայական իմաստ ներառնելու հնարավորություն: Առանձնապես մեծ տարբերություն կա միևնույն ղերբայական ձևի կրավորական ու ներգործական փոխանունների միջև:

Այժմ իրար հետ համեմատենք միևնույն բայերի տարբեր ղերբայական ձևերի փոխանունները: Վերցնենք հետևյալ զուգահեռ ձևերը.

ասողը, մտածողը, որոշողը.

ասածը, մտածածը, որոշածը.

Այս համապատասխան զուգահեռ ձևերի փոխանունների միջև առարկայական իմաստի տեսակետից կա էական տարբերություն: Ընթացական դերբայով արտահայտված փոխանունների մեջ ներառնված է գործողություն կատարողի իմաստ, իսկ հարակատար ղերբայներով արտահայտված փոխանունների մեջ արտահայտված է գործողության ենթակա օբյեկտի առարկայական իմաստը:

Հետաքրքրական է, որ նշված և նման օրինակներում այս տեսակետից ենթակայական ու հարակատար ղերբայների միջև կա այն տարբերությունը, ինչ որ ենթակայական ղերբայի ներգործական ու կրավորական սեռերի միջև: Իայի ղերբայական երկու ձևերի այս տարբերությունը, որ ըստ էության ոչ թե ղերբայական իմաստի տարբերությունն է, այլ բայի սեռի բնույթի տարբերություն, շատ հետաքրքրական և ուշագրավ երևույթ է բառի բառական իմաստի ու քերականական տարբեր իմաստների փոխհարաբերության տեսակետից:

Նշենք, որ ենթակայական ու հարակատար ղերբայների փոխանունների միջև ոչ միշտ է լինում այդպիսի տարբերություն: Ինչպես երևում է վերևի օրինակներից, հիշյալ տարբերություններն ունեն բայի ներգործական սեռի ղերբայների փոխանունները: Այդպիսին չեն չեղոք սեռի բայերի ենթակայական ու հարակատար ղերբայների փոխանունները: Հմմտ. եկողը և եկածը, ղնացողը և գնացածը, անցնողը և անցածը, հասնողը և հասածը, մրսողը և մրսածը և այլն:

Այլ յուրահատկություն ունի անորոշ ղերբայի փոխանունը: Այդ յուրահատկությունը արտահայտվում է նախ այն բանում, որ անորոշ ղերբայը չի դրվում առարկայի անվան վրա իբրև որոշիչ⁴ և նրա փոխանունը չի կազմվում որոշյալի կրճատումով և վերջինիս իմաստը որոշիչի մեջ ներառնելու միջոցով, ինչպես լինում է սովորաբար: Անորոշ ղերբայի փոխանունը կազմվում է պար-

⁴ Խոսքը անորոշ ղերբայի ուղիղ ձևի մասին է. թեք հոլովներից սեռականն. իհարկե, իբրև որոշիչ գործածվում է:

դապես նրա իմաստը, այսպես ասած, առարկայացնելու միջոցով: Դա առանձնապես երևում է շեզոփ սեռի բայերի փոխանուններից: Դնալը, գալը, մնալը և ուրիշ փոխանունների մեջ ոչ գործողության ենթակա առարկան է նշվում կամ ակնարկվում և ոչ նույնիսկ գործողություն կատարողը, այլ միայն՝ նշված գործողությունն ինքնին վերցրած, եթե կարելի է ասել, առարկայացված: Սա, իհարկե, չի նշանակում, թե խոսքի մեջ չի կարող հասկացվել, թե ով է կատարում տվյալ գործողությունը: Դա խոսքից հասկացվում է, եթե անհրաժեշտ է, բայց դա չի բխում տվյալ բայից, այլ ուրիշ բառերից, իսկ այդ փոխանվան մեջ ակնարկ նույնիսկ չկա գործողություն կատարողի վերաբերյալ:

Օրինակ՝ «Յուսուփը Աշուալի գալը լսելով խույս է տվել դեպի Ատրպատական» (ՄԳՄ, էջ 49): «Արդյո՞ք լրանալիները յուր մոտ պիտի մնան մինչև վեհի գալը» (ն. տ., էջ 12):

Որոշ շափով այլ յուրահատկություն ունեն ներգործական ու կրավորական բայերի անորոշ դերբայական ձևի փոխանունները: Այդ բայաձևերի ունեցած սեռի իմաստը անշուշտ դեր կատարում է այս հարցում: Եվ երբ դրանք վերածվում են փոխանվան, բայիմաստի մեջ եղած սեռի իմաստով ենթադրվող առարկայական իմաստը բնականաբար պահպանվում է, բայց փոխանունը իմաստային տեսակետից այնուամենայնիվ, ավելի բնորոշվում է բուն գործողության իմաստի առարկայացումով: Այսպես՝ գրելը փոխանվան մեջ կա որոշ ակնարկ այդ ներգործական բայի խնդիր պահանջելու վերաբերյալ և դա այնչափով, որչափով այդ բայը պատկանում է ներգործական սեռին: Գարծում ենք, չի կարելի ասել, թե գրել, տեսնել, ուտել ձևերի մեջ խնդրի ակնարկն ավելի թույլ է, քան թե գրելը, տեսնելը, ուտելը ձևերում:

Խնդիր ակնարկելու իմաստը այդ դուգահեռ ձևերի մեջ էլ նույնն է: Փոխանունների մեջ ուժեղանում է գործողության առարկայացման իմաստը: Իրելը փոխանունը նշանակում է «գրելու գործողությունը», տեսնելը՝ «տեսնելու գործողությունը», ուտելը՝ «ուտելու գործողությունը»: Այնպես որ այս ձևերի մեջ գործողությունն է, որ առարկայացվում է: Հմմտ. գրածը՝ գրած նամակը, կերածը՝ կերած խնձորը, ուտողը՝ ուտող մարդը, գրողը՝ գրող աշակերտը:

Ինչպես տեսնում ենք, իմաստային-ֆունկցիոնալ փոխանունները առարկայական իմաստ ներառնելու տեսակետից ունեն տարբեր յուրահատկություններ, որոնք պայմանավորված են որպես փոխանուն գործածվող բառի բառային իմաստով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առարկայական այս կամ այն իմաստը անփոփոխ ու կայուն չէ լեզվի զարգացման բոլոր շրջաններում: Այդ իմաստը ենթակա է փոփոխության: Մենք վերը տեսանք, որ փոխանվան մեջ ներառնվող առարկայական իմաստը սերտորեն պայմանավորված է բառիմաստով. տվելացնենք, որ վերջինիս փոփոխության հետ միասին փոխվում է նաև տրվյալ բառի մեջ ներառնվող առարկայական իմաստը: Ոչ հեռու անցյալում լուծողը, որոշողը, հաշվողը փոխանունների մեջ կարող էր ներառնվել միայն անձի իմաստ, իսկ այժմ այդ փոխանունները կարող են վերաբերել նաև իրերի, հանձինս որոշ մեքենաների, որոնք կատարում են համապատասխան գործողություններ: Նշված փոխանունների մեջ առարկայական իմաստի փոփոխությունը պայմանավորված է համապատասխան ենթակայական ձևերի դերբայական իմաստի ընդլայնումով:

Նախքան անվանողական-ֆունկցիոնալ փոխանունությունն անցնելը, անհրաժեշտ է կանգ առնել մի հարցի վրա ևս: Ինչպես տեսանք, իրրե իմաստային-ֆունկցիոնալ փոխանուն կարող են հանդես գալ հատկանիշ ցույց տվող խոսքի մասերը, որոնք լուրջն էլ, իհարկե, ունեն նյութական իմաստ: Հատկանիշ ցույց տվող խոսքի մասերից միայն մակրայն է, որ իմաստային-ֆունկցիոնալ փոխանուն լինել չի կարող:

Ո՞րն է դրա պատճառը:

Բանն այն է, որ նշված խոսքի մասերը առարկայի հատկանիշ են ցույց տալիս և դրվում են առարկայի անվան վրա իրրե որոշիչ (այս տեսակետից յուրահատուկ իմաստ ու կիրառություն ունի անորոշ դերայնը, ինչպես տեսանք վերը), իսկ մակրայն ոչ թե առարկայի, այլ հատկանիշի հատկանիշ է ցույց տալիս, և նրա բնորոշ դերը ոչ թե որոշիչի, այլ պարագայի պաշտոնն է: Ուրեմն, մակրայն իր հիմնական կիրառության դեպքում որոշյալ չի ունենում, որի առարկայական իմաստը անհրաժեշտության դեպքում իր մեջ ներառնի հետևապես և գործածվի իրրե փոխանուն: Այսպիսով մակրայնը, որպես կանոն, չի կարող գործածվել իրրե իմաստային-ֆունկցիոնալ փոխանուն, և դա բացատրվում է մակրայնի իմաստային ու կիրառական յուրահատկությամբ:

Այժմ անցնենք անվանողական-ֆունկցիոնալ փոխանունների քննարկմանը: Անվանողական-ֆունկցիոնալ փոխանունությամբ կարող են գործածվել լուրջ խոսքի մասերը, լուրջ բառերը առանց բացառություն:

Օրինակ՝ Աշխատել-ը իմաստային խիստ փոփոխության է ենթարկվել հայերենում: Այժմ-ը որակական ածական է: Տասնմեկ-ը բարդ թվական է: Մեկ-մեկ-ը ընդհանրական մակրայն է: Թե-ն կատարում է նաև համադասական շաղկապի դեր: Գ-ն ժամանակակից հայերենում այլևս իրրե կապ չի գործածվում: Այ-ի վրա բացականչական նշան դիր: Բուցե-ն մակրայն չէ, այլ եղանակավորող բառ:

Անվանողական-ֆունկցիոնալ փոխանունությամբ նաև կարող է հանդես գալ առհասարակ լեզվական ամեն մի միավոր՝ նախադասություն, բառակապակցություն, բառի թեքված ձև, հնչյուն:

Օրինակ՝ «Թարձրացնել աշխատանքային կարգապահությունը» միակազմ անդեմ նախադասություն է: «Հին հայերենում Բ-ով անկարելի է բառ սկսել, ուստի և փոխառյալ բառերում Բ-ով սկսվող բառն առջևից ստանում էր ա կամ ե» (ԷԲԱ, Հն, էջ 147): «Մենք պ-ն և տ-ն, ր-ն և դ-ն դիտում ենք իբրև տարբեր հնչյուններ միայն նրա համար, որ պ-ն ու տ-ն խուլ են... իսկ Բ-ն ու Ղ-ն ձայնեղ են» (ԳՄ, ԺՀԴ, էջ 44—45): «Եթե, զրաժ, զրելու և այլն ածական են, ապա ուրեմն զրաժ եմ, զրաժ եմ, զրաժ եմ, զրելու եմ, զրելու եմ բայ չեն» (Ն. տ., էջ 294):

Ընդգծված նախադասությունը, տառերը, բառաձևերը փոխանուններ են և նախադասության մեջ կատարում են գոյականի պաշտոններ՝ ենթակայի, ուղիղ խնդրի, անուղղակի խնդրի և այլն: Ինչպես տեսնում ենք, սրանք այն պիսի ֆունկցիաներ են, որոնք հատուկ են գոյականին: Սակայն փոխանուններն ունեն նաև այլ դրսևորումներ. կարող են հանդես գալ նաև իրրե որոշիչ դրվելով համապատասխան գոյականի վրա:

«Օրինակի համար սարդաբ բառը կարելի է բաժանել սար-դաբ, սարդաբ, ս-արդաբ մասերի, մինչդեռ սարդաբ բառը բացառված չէ նրանցից և ոչ մի առնչություն չունի ոչ սար, սարդ, արդաբ բառերի և ոչ էլ ս հոգի կամ

սառ ճնշյունախմբի հետ» (ԳՍ, ԺՀԴ, էջ 44—45): «Էկորցնենք Բարին, պատին և Բարիւ, պատիւ Բառերը» (ն. տ., էջ 209): «Նա կանչեցի բծիշկ նախադասութեան մեջ բծիշկ Բառը ունի իրի առում... մինչդեռ ВЫЗВАЛ ВРАЧА նախադասութեան մեջ չկա ոչ իրի և ոչ էլ անձի առում» (ն. տ., էջ 210): «Շատ կանոնավոր է այլին և էլի մասնիկների գործածությունը» (Աճ., ՀԼՊ, 2-րդ, էջ 108): «Առավել բարձր դիրք է ընդունում լեզուն ի ձայնավորի արտասանութեան ժամանակ» (ԷԲԱ, ԼՆ, էջ 124):

Ինչպես երևում է, բերված օրինակներում որոշիչի դեր են կատարում բառեր, նախադասություններ, քննականական ձևեր, ճնշյուններ (տառեր), ճնշունակապակցություններ, ածանցներ: Այդ բոլոր փոխանունները գոյական որոշիչի դերով են հանդես գալիս: Որոշիչի դերով կարող են հանդես գալ անխտիր բոլոր անվանողական-ֆունկցիոնալ փոխանունները:

Ինչ առնչություն կա փոխանունների այս երկու կարգի ֆունկցիաների՝ որոշիչի դեր կատարելու և գոյականին հասուկ պաշտոններ (ենթակա, խնդիր և այլն) կատարելու միջև:

Հանձնա փոխանունների հիշյալ երկու կարգի արտահայտությունների, մենք գործ ունենք փոխանունության երկու աստիճանների հետ, ըստ որում որոշիչի դեր կատարող ֆունկցիան առաջին աստիճանն է, իսկ գոյականի դերով կիրառվողները՝ երկրորդ աստիճանը:

Համեմատենք հետևյալ շարքերը.

Ա	Բ
Բայց բառը շաղկապ է:	Բայց-ը շաղկապ է:
Վրա կապը հիմնականում	Վրա-ն հիմնականում տեղի իմաստ
տեղի իմաստ ունի:	ունի:
Բ հնչյունը շրթնային,	Բ-ն շրթնային, ձայնեղ, պայթական
ձայնեղ, պայթական բաղաձայն է:	բաղաձայն է:

Ե շարքի փոխանունները կազմված են Ա շարքի փոխանուններից՝ որոշյալը որոշիչի մեջ ներառնելու միջոցով: Եթե Ա շարքում ենթակա են բառը, նապը, հնչյունը բառերը, որոնց համար որոշիչ են բայց, վրա, բ, ապա Բ շարքում հիշյալ որոշյալները դուրս են մնացել: Գործածությունից, նրանց որոշիչները ձեռք բերելով առարկայի ընդհանուր իմաստ՝ դարձել են փոխանուններ և կատարում են ենթակայի պաշտոն: Դա իր կազմավորման եղանակով նման է առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի բուն կիրառություններից իմաստային-ֆունկցիոնալ փոխանուն կազմելու երևույթին: Ինչպես՝ լավ բանը հաճե՛ի է, Լավը հաճե՛լի է:

Այսպիսով, հասկանալի է, որ փոխանուններ են հիշյալ թե՛ Ա և թե՛ Բ շարքի օրինակների ընդգծված լեզվական միավորները, և՛ Ա շարքի փոխանունները կազմվում են Ա շարքի փոխանուններից ու վերջինների երկրորդ աստիճանն են:

Չնայած հայոց լեզվի ճկունությունը հնարավորություն է ընձեռում կազմելու բոլոր փոխանունների երկրորդ աստիճանը, սակայն իրականում երկրորդ աստիճանը երբեմն չի կազմվում պարզապես անբարենշնչությունից, ոճական անհարթությունից խուսափելու նպատակով: Դա հատկապես վերաբերում

է նախադասությունների, թեք հոլովաձևերի ու խոնարհման որոշ ձևեր թեք հոլովաձևերով գործածելու դեպքերին:

Օրինակ՝ «Մարդը հասարակական կենդանի է և մարդը հասարակական կենդանի չէ նախադասություններից առաջինի կոնկրետ բովանդակությունը ճիշտ է, երկրորդինը՝ սխալ» (ԷԲԱ, ԼՆ, էջ 95): «Ես գոհ եմ իմ դասընթացից» և «Ես գոհ եմ իմ կուրսից» արտահայտությունները այլ լեզուները պետք է կազմեն միևնույն կուրս բառով» (ԳՍ, ԺՀԴ, էջ 139): «...Սեղան-ի, սեղան-ից, սեղան-ով և այլ ձևերում -ի, -ից, -ով ձևույթներով կազմում ենք սեռական, բացառական, գործիական հոլով» (ԷԲՍ, ԼՆ, էջ 287):

Եթե փորձելու լինենք վերջին օրինակում առաջին աստիճանի փոխանունները վերածել երկրորդ աստիճանի փոխանվան, կստանանք հետևյալը.

«Սեղան-ի-ում, սեղան-ից-ում, սեղան-ով-ում և այլնում ի-ով, ից-ով և ավ-ով կազմում ենք սեռական, բացառական, գործիական հոլով»: Իհեռ մեր լեզուն ունի բառափոխական ձևուն հնարավորություններ այսպիսի ձևեր կազմելու, բայց այդ ձևերը դուրահունչ չեն: Այսպիսի փաստերը ցույց են տալիս, որ անվանողական-ֆունկցիոնալ փոխանունություններ կազմելու մեր լեզվի հնարավորությունները չպետք է չարաշահել:

Այժմ համառոտակի ծանոթանանք փոխանունների քերականական հատկանիշներին:

Հոլովվելիս փոխանունները, անկախ իրենց ձևից ու իմաստից, ենթարկվում են ի հոլովման: Այսպես՝ ցանկալիի (և ոչ թե ցանկալու), հիանալիի (և ոչ թե հիանալու, այս ձևը կա, բայց ոչ իբրև հիանալի ածականի սեռական). «Վերք Հայաստանի»-ի առաջարանը:

Ընդհանրապես ասվում է, որ փոխանունները կատարում են գոյականի պաշտոնները: Սա ընդհանուր առմամբ ճիշտ է: Սակայն փոխանունները շարահյուսական կիրառությունների տեսակետից ունեն մի շարք յուրահատկություններ ու տարբերություններ, որոնք չի կարելի անտեսել:

Նախ, պետք է նկատի ունենալ, որ փոխանունները բացի գոյականի համար հատկանշական ֆունկցիաներից (ենթակա, խնդիրներ), կատարում են նաև որոշիչի դեր, ըստ որում սա փոխանվան ամենատարածված պաշտոնն է: Այս ֆունկցիայով հանդես են գալիս բոլոր առաջին աստիճանի անվանողական-ֆունկցիոնալ փոխանունները առանց բացառության: Չնայած որոշիչի պաշտոնը ածականի, թվականի համար ավելի բնորոշ ֆունկցիա է, քան թե գոյականի համար, բայց փոխանուն որոշիչը իր բնույթով ու էությունով հարում է գոյական որոշիչին: Անկախ այն բանից, թե առաջին աստիճանի տվյալ փոխանունը ինչ խոսքի մասից է կազմված (ածական, թվական, բայ և այլն), բոլոր դեպքերում էլ այն կատարում է գոյական որոշիչի դեր: Մինչդեռ գոյական որոշիչի դեր կարող են կատարել ոչ բոլոր գոյականները, այլ նրանց միայն մի փոքր մասը, որն ունի հատկանիշի որոշ իմաստ և չունի բուն գոյականակերտ ածանց: Այս վերջին վերապահումն այն պատճառով ենք անում, որ ունյիսկ հատկանիշի իմաստ ունեցող գոյականները, եթե ունեն գոյականակերտ ածանց, իբրև որոշիչ չեն գործածվում, ինչպես՝ Բաջուրյուն, հեռուստորյուն, լավուրյուն, բաթուլնի և այլն: Իսկ իբրև փոխանուն գործածված բառերն ու լրացական իմաստը և ոչ էլ ձևը հիշյալ ֆունկցիան կատարելու տեսակետից ոյնէ նշանակություն չունեն:

Օրինակ՝

Այդ բայի համար անսլոգիական նոր կազմությամբ ստաց է եկել «ուն-
զա» ձևը, որ և գործածվում է «ունենալ» նշանակությամբ, իսկ հին կատարյա-
լը՝ «կալալ» մնում է բարբառների մեջ «բունեցի» նշանակությամբ» (Մ. Արեղ-
յան, Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 47)։

Այս օրինակի (ինչպես և բոլոր) փոխանուն որոշիչները պատասխանում
են ուր, ի՞նչ հարցերին, թեև այս օրինակում իրեն փոխանուն գործածված է
բայեր, որոնք իրենց իմաստի թևադրանքով պիտի պատասխանեին այլ հար-
ցերի։ Նույնիսկ ածականով արտահայտված փոխանուն որոշիչի վերաբերյալ
չի կարելի ապա ինչպիսի հարցը, այլ գոյականների համար տրվող հիշյալ հար-
ցերը։ Օրինակ՝ Կեղեցիկ բառը որակական ածական է։ Հմմտ. Կեղեցիկ լճա-
կում լողում են երեխաները։

Փոխանուն որոշիչները չեն բնորոշում իրենց որոշյալի որևէ հատկանիշը,
այլ ցույց են տալիս, թե ինչ, որ բառին, միավորին է վերաբերում որոշյալը։
Դա է պատճառը, որ ամեն բառ, լեզվական միավոր անկախ իր իմաստից,
մտքից կարող է հանդես գալ իրեն փոխանուն որոշիչ։

Սովորական որոշիչների որոշյալը նայած ղեպքին կարող է զրվել թե որոշ-
յալ, թե անորոշ առումով։ Հատկապես անորոշ որոշյալ են պահանջում այնպի-
սի որոշիչներ, որոնք ունեն խիստ անորոշ իմաստ, այդ թվում՝ մանավանդ
ղերանուններ որևէ, որևիցե, ինչ և այլն (որևէ գիրք, որևիցե աշակերտ, ի՞նչ
աշխատանք և այլն)։

Որպես կանոն փոխանուն որոշիչների որոշյալը զրվում է որոշյալ առու-
մով։ Օրինակ՝ «Ինչ բառը հարցական-հարաբերական ղերանուն է»։ «Որևէ, ղե-
րանունը կազմված է ուր, և, է բաղադրիչներից»։ Այդ երևույթի պատճառը
դարձյալ փոխանուն որոշիչի իմաստային յուրահատկությունն է, քրա անվա-
նողական ղեր ունենալը։ Հիշյալ և նման բառերի իմաստը անշուշտ անորոշ է,
բայց եթե դրանք գործածում ենք իրեն փոխանուն, անուսում ենք իմաստը
այդ թվում, իհարկե, նաև իմաստային անորոշությունը, և այդ բառերը նկատի
ենք ունենում իրեն մեզ որոշակիորեն հայտնի բառ, լեզվական միավոր։ Այդ
պատճառով էլ նրա որոշյալը զրվում է որոշյալ առումով։

Եթե առաջին աստիճանի անվանողական-ֆունկցիոնալ փոխանունները
սովորական գոյական որոշիչի համեմատությամբ, ինչպես տեսանք, ունեն
շատ լայն կիրառություն (այն իմաստով, որ այդպիսի ամեն մի փոխանուն կա-
րող է հանդես գալ իրեն որոշիչ), իսկ երկրորդ աստիճանի անվանողական-
ֆունկցիոնալ փոխանունները նույն գոյականների համեմատությամբ ունեն
շարահյուսական ղերի սահմանափակություն։ Մենք վերը տեսանք, թե ինչով
է պայմանավորված առաջին տարբերությունը։

Այժմ տեսենք, թե ո՞րն է այս երկրորդ տարբերության պատճառը։ Նախ,
պետք է նկատի ունենալ, որ գոյականների մի շարք ֆունկցիոնների հարցում
ղեր են կատարում այդ բառերի իմաստային որոշ յուրահատկություններ։ Այդ
պաշտոններն են սեռականով արտահայտված որոշիչը, հայցականով, գոր-
ծիականով, բացատրականով արտահայտված տեղի պարագան, առհասարակ
ժամանակի պարագան, ձևի պարագան և այլն։ Սրանք այնպիսի պաշտոններ
են, որ ամեն գոյական չի կարող կատարել (մի բանի պաշտոնների դա վերա-
բերում է հիշյալ հոլովներով կիրառվելու ղեպքում)։ Այդ պաշտոնները կարող
են կատարել այնպիսի գոյականներ, որոնք ունեն համապատասխան իմաստ՝
որակի, ձևի, տեղի, ժամանակի հատկանիշ։

Եվ քանի որ փոխանունների մեջ բառական իմաստը որևէ էական դեր չի կատարում⁵, և նրանք հանդես են գալիս սոսկ իրրե անուններ, այդ պատճառով էլ փոխանունները չեն կատարում մի շարք պաշտոններ: Նրանք կատարում են գոյականի միայն այն պաշտոնները, որոնք պայմանավորված չեն բուն իրային, առարկայի իմաստից բացի այլ իմաստներով: Եվ, ի միջի այլոց, փոխանունները և հատկապես անվանողական-ֆունկցիոնալ փոխանունները կարող են լավ չափանիշ լինել գոյականների շարահյուսական կիրառություններն ուսումնասիրելիս, որոշելու համար այն պաշտոնները, որոնք հատուկ չեն բոլոր գոյականներին և լիսում են տարրեր գոյականների իմաստային յուրահատկություններից:

Նշենք անվանող-ական-ֆունկցիոնալ փոխանունների կիրառության մեկ յուրահատկություն ևս: Այս փոխանունների արտասանական երանդը (հարցում, բացականչում, հրաման) որևէ դեր չի կատարում ամբողջ նախադասության բնույթի հարցում: Վերցնենք մեկ օրինակ. «Որոշիչը պատասխանում է ինչ-պիսի՞, ո՞ր, ո՞րեքորդ, ուրե՞ն, բանի՞ հարցերին»: Թեև այս նախադասության մեջ հինգ բառեր ունեն հարցական նշան, արտասանվում են հարցական երանդով. այնուամենայնիվ դա դեր չի կատարում նախադասության բնույթի խնդրում և այդ նախադասությունը պետք է համարել պատմողական: Մի այլ օրինակ. «Գուցիկ տեսած կա՞ս» նախադասության ստորոգյալը պարզ է, թեև կազմված է երկու բառից: Նույն կարգով և հրամայական չպետք է համարել հետևյալ նախադասությունը, թեև նրանում մեկ հրամայական նախադասություն գործածված է իրրե անվանողական ֆունկցիոնալ փոխանուն որոշիչ. «Ձարկեցե՛ղ դարբիններ կուներ սալին» նախադասությունը հրամայական է:

Այսպիսով, փոխանունները գոյականների հետ ունեցած շատ ընդհանրությունների հետ միասին ունեն նաև մի շարք էական յուրահատկություններ:

Ամփոփենք. քերականական փոխանությունները ոճական փոխանունությունից տարրեր լեզվական երևույթ է, որ այն տարածում ունի ժամանակակից հայերենում, հանդիսանում է նրա քերականական կառուցվածքի յուրահատուկ ու ուշադրավ կողմերից մեկը և վկայում է այդ կառուցվածքի զարմանալի ճկունությունը: Քերականական փոխանունները տարրերով են իրարից և բաժանվում երկու հիմնական տեսակների՝ իմաստային-ֆունկցիոնալ ու անվանողական-ֆունկցիոնալ, որոնք որոշ ընդհանրությունների հետ միասին ունեն էական տարրերություններ իրարից՝ թե՛ բնույթի և թե՛ կիրառությունների տեսակետից: Փոխանուն պետք է համարել բառերի ու լեզվական այլ արտահայտությունների ոչ միայն գոյականին հատուկ կիրառությունները (ենթակա, խնդիր, ստորոգյալական վերադիր), այլև որոշիչային կիրառությունները (խորհրդավոր՝ ածականը, կարգալ բայը, և շարկապար և այլն), որոնք իրենց կշիռով, տարածվածությամբ չեն զիջում մյուս կիրառություններին և փաստորեն հանդիսանում են անվանողական-ֆունկցիոնալ փոխանունների առաջին աստիճանը:

Թե՛ այդ տարրերությունների և թե՛ ընդհանրապես փոխանունների հատկանիշների բացահայտումը, ինչպես տեսանք, հնարավոր է բառի քերականական և իմաստային փոխհարաբերությունները պատշաճ կերպով հաշվի առնելու դեպքում:

⁵ Մի փոքր վերապահում իմաստային-անվանողական փոխանունների վերաբերյալ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՃ., ՀԼՊ — Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հտ. 2, 1952:
 Բակ. — Ա. Բակունց, Երկեր, 1955:
 ԳՍ, ԺՀԼԴ - Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955:
 ԴԴ — Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, 1955—1957:
 ԷԲԱ, ԼՆ - Է. Բ. Աղայան, Հեղափոխության ներածություն, 1952:
 ՀՔ, ՄՏԶ - Հ. Քոչար, Մեծ տան զավակները, 1952:
 ՄԳՄ — Մուրացան, Գևորգ Մարկոսյանի, 1952:
 Ր — Րաֆֆի, Երկերի ժողովածու, հտ. 7, 1956: